


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հմր. 8 Մճ.
" " " " " " " " " " " " 10 Մճ.
վեցամսեայ " " " " " " " " " " 4 Մճ.
" " " " " " " " " " " " 3 Մճ.
Գանուցման տողը մէկ տեղամի հա-
մար 3 զուրուշ, երկու տեղամի հա-
մար 2 զուրուշ, աւելի տեղամի հա-
մար զատ սակարկութիւն կըլ-
այ :



ԼՐԱՔԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊԱՅՄԱՆՔՈՒԹՅԱՆ 44 ՓԵՏՐՎԱՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Օրուան լուրերը դարձեալ ըստ բաւականի զոհարարեցին չին : Չորեք-
շաբթի օրը վեհ. Սուլթանին նախա-
գահութեան ներքեւ երկրորդի կայսե-
րական պալատը խորհուրդ մ'երաւ
ներկայ կարեւոր խնդրոց վրայ : Կըս-
ւի թէ Ռուս. դարձեալ կը պահան-
ջեն Կ. Պոլսոյ շրջակայքը քանի մը
տեղ գրաւել : Եթէ թրիտանական նա-
ւատորմը Մարմարայի մէջ մնայ, բայց
որովհետեւ յիշեալ նաւատորմը մեկ-
նեւաւ արամադրութիւն չցուցներ,
կըստի թէ Սեպտեմբրի քորավարին դո-
րաց մէկ մասն Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս.
գայ : Ռուսիոյ նոր առաջարկութիւն-
ներն երկրորդի պալատն եղած վերո-
յիշեալ խորհրդոյն ներկայացեր են
եղեր : Ռուսիա իւր նորառաջարկու-
թեամբը հաշտութեան պայմաննե-
րը կը թերթէն : Եթէ Բ. Դուռն հա-
ւանի իրեն հետ պաշտպանողական և
յարձակողական դաշնակցութիւն մը
կնքել : Իսկ եթէ այս դաշնակցու-
թիւնը չընդունուի, հաշտութեան
պայմաններն աւելի խիստ են : Ռու-
սիա այն ատեն կը պահանջէ եղեր
որ Մարմարայի երկրքը մնայուն ծո-
վային կայսրան մ'ունենայ, ահագին
պատերազմական տուգանք մը վճար-
ւի և Օսմանեան նաւատորմն իրեն
յանձնուի : Ռուսիա կը ծանուցանէ
դարձեալ որ եթէ մինչև մարտ 2 հաշ-
տութեան պայմանները չկարգադրին,
զինադադարը չպիտի վերանորոգի :

Բայց Բ. Դուռն չհամար իւր նա-
ւատորմը յանձնել, պատճառելով թէ
այն ատեն Օսմանեան պետութեան
ընդարձակ ծովերէրը չկրնար ծո-
վապատակներու դէմ պաշտպանել :
Կը կարծուի թէ Ռուսիա այս կէտիս
վրայ չանդեր, քանզի ոչ ոք կրնայ
թխտել թէ նաւատորմը պահելու հա-
մար Բ. Դրան ցոյց տուած պատճառ-
ներն իրաւացի են : Վսեմ. Նամիդ-
փաշային Բեդրասլուրի երկրաւ պաշ-
տօնը բոլորովին ետ մնացած կերե-
ւի : Իսկ գեապանախորհուրդն երեք
շաբաթէն պիտի դուրսդրի :

Շաբթուս հեռագրերն երկու կա-
րեւոր յայտարարութիւն բերին Սրե-
ւիեան խնդրոյն վրայ : Գերմանական
խորհրդարանին իրեար. 19 ի նստին
մէջ Կաթոլիկ երեսփոխան մը հար-
ցում մ'ըրած էր ըսելով թէ Գերմա-
նիոյ աշխարհապարութիւնը չափա-
զանց կուսակից է Ռուսիոյ, և բաւա-
կան կուսակից չ'է Աւստրիոյ : Պիս-
մարը իշխանը պատասխանեց թէ
Գերմանիոյ շահերը սերտիւ միացած
են Աւստրիոյ զարգացման հետ, և թէ
Գերմանիոյ և Աւստրիոյ կայսերաց

յարաբերութիւնները խիստ բարեկա-
մական և անկեղծ են : Եթէ զատ
իւր անձնական յարաբերութիւններն
ալ Սերտարի կոմսին հետ աշխարհ-
մանքովական են, որ կրնան անկեղծա-
բար ճշմարտութիւն իրարու յայտնել
Հաշտութեան իրաւունքն ըսած էր
նաեւ թէ Գարգանել Երոպայի բանա-
լին է : Պ. Տը Պիսմարը ըսաւ որ եթէ
այս խօսքն ստոյգ ըլլայ, Սուլթանն
աշխարհի տէրը կ'ըլլայ : Ի վերջոյ Պ.
Տը Պիսմարը ըսաւ թէ չ'իմաստիւր որ
Գերմանիա հաշտութեան իրաւարար
ըլլայ, և իւր խօսքն արդարացնելու
համար յարեց թէ Նիքոլա կայսրն Օլ-
մուցի հաշտութեան հետ ապերախ
տութիւն տեսած էր : Պ. Տը Պիսմար-
ըի հետեւեալ խօսքն ալ ծափահա-
րութեամբ ընդունուեցաւ : «Մեր ա-
մենէն կարեւոր շահն է որ ներդոյնե-
րն և Դանուբ իւր բերանէն սկսեալ
ազատ մնան, ինչպէս մինչև հիմայ
այս կէտը Բեդրասլուրի մէջ ևս ճան-
չուեցաւ : Իսկ պատերազմական տու-
գանաց խնդիրը փարկի դաշնադ-
րութեան ստորագրող տէրութեանց
խորհրդակցութեանը ներկայանալիք
կետերէն մին պիտի ըլլայ, քանզի կա-
րելի է որ հոգային հատուցում պա-
հանջուի, և այս նկատմամբ կարեւոր
է զիտնալ թէ որո՞յ ձեռք պիտի իյ-
նայ Դարգանել : Բայց ինչ որ ալ ըլլայ,
յարեց Պ. Տը Պիսմարը, Գերմանիոյ
վաճառականութիւնն այսուհետեւ ալ
ամեն զնապէ ազատ պիտի մնայ » :

Կարեւոր յայտարարութիւն մ'ալ
Հունգարիոյ նախարարաց գլուխ Պ.
Թիծա ըրաւ : «Աւստրո-Հունգարական
կառավարութիւնն, ըսաւ, հաշտու-
թեան հիմունքն ընդունեց, բայց չը
գիտցուի թէ արդեօք ուրիշ կար-
գադրութիւններ ալ կ'ա՞ն » : Կառավա-
րութիւնն ալ այս նկատմամբ իւր տե-
սակէան անկեղծութեամբ ծանու-
ցեր է յայտարարելով թէ պատերազ-
միցայ իրենց մէջ կնքած պայմաննե-
րը փարկի դաշնադրութիւնն ստո-
րագրող տէրութեանց շահերուն դըպ-
չող կէտերու նկատմամբ անփաւեր են,
քանի որ այս մասին յիշեալ տէրու-
թեանց մէջ համաձայնութիւն չ'հա-
տատուի : Պ. Թիծա՝ առանց հաշ-
տութեան հիմքը մի առ մի բացատ-
րելու, յայտարարեց սակայն թէ այն
հիմքէն ոմանք Աւստրո-Հունգարա-
կան կառավարութեան շահերուն հա-
մաձայն չ'են : Աւստրո-Հունգարական
կառավարութիւնը քրիստոնէից վիճա-
կը բարեւորելու մասին համամիտ է,
սակայն ի միտս իրեն միայն մէկ տե-
րութեան մը գերազանցութիւնը չ'ըն-
դունիր : Պ. Թիծա կը յուսայ թէ ա-
մեն տէրութեանց շահերուն համե-
մատ դոհացուցիչ համաձայնութիւն
մը կրնայ հաստատուիլ :

Այս յայտարարութիւնները քա-
ղաքական վիճակին անստուգութիւնը

չեն փարատեր : Պ. Պիսմարը խօս-
քերը Բեդրասլուրի արքունեաց հետ
անհամաձայնութեան նշան մը չեն
ցուցներ : մինչդեռ Պ. Թիծայի խօս-
քերը թէ և Ռուսիոյ հաշտութեան
հիմքուն մէջ Աւստրո-Հունգարական
կառավարութեան աննպատակեցե-
րը կը ցուցնեն, սակայն ապագայ դե-
պանախորհուրդը կրնայ ասոնց նկատ-
մամբ դոհացուցիչ լուծումը գտնել :
Այս պարագայից մէջ յանդգնութիւն
կը համարենք ըսել թէ պատերազմը
կրնայ ծաւալիլ և ընդհանուր կեր-
պարանք առնուի :

Այս շաբթու մայրաքաղաքիս մէջ
կարեւորութեան արժանի դէպք մ'էր
տասն Օսմանեան երեսփոխանաց հե-
ռացումը : Երեսփոխան երեսփոխան
Երեսփոխան Զիա Էֆէնտին Սուլթանին
խարարին նամակ մ'ուղղեց, որոյ մէջ
տասնութնութեան նախարարին յիշեալ
տասն երեսփոխանաց ըրած ծանր մէկ
խօսքին դէմ կը բողոքէր : Նախարա-
րը զիրենք կոչած էր հրաւիրելու
որ իրենց երկիրը վերադառնան շու-
տով : Երեսփոխաններէն ոմանք յայ-
տարարեցին թէ անձնական գործեր
ունէին Պոլսոյ մէջ կարգադրելիք և
թէ տակաւին իրենց ճանապարհի
ծախքն առած չէին : Ռուսիական
թեան նախարարն այն ատեն ըսեր է,
«Կըցաւ իմ աղջկն վրայ, որ ձեզի պէ-
տադրած և ընկերական վիճակի զուրկ
երեսփոխաններ ընտրած է » : Երեսփո-
քիա Էֆէնտին այս թշնամանաց դէմ
կը բողոքէր : Այսու ամենայնիւ յիշ-
եալ տասն երեսփոխանը, որոց եր-
կուքը քրիստոնէաց են, խորհրդան
Մանուկ Էֆէնտին Հալեպէն և Հալի-
Ղանիմ Էֆէնտին Սուլթանին, և ուրիշ
խարա, մայրաքաղաքէս բռնի մեկնե-
ցան : Երեսփոխան Զիա Էֆէնտին
Սուլթանին Մարտ շողեւանէն երկրորդ
նամակ մ'ուղղեց Սուլթանին Նախարա-
րին : Այս վերջին նամակը՝ զոր ա-
ռաջնոյն նամակ լէվրելէ չ'էր ըրալ մէջ
հրատարակեալ կը տեսնենք, կըսէ
թէ իւր առաջին նամակին պատաս-
խան չ'է ընդունած, և ըստ որում
կրկին կրկին հրաման արուեր է իրենց
մայրաքաղաքէս մեկնելու, այս հրա-
մանին հնազանդելով շորեքշաբթի
աւուր շողեւանաւ կը մեկնի Երեսփո-
քիա Էֆէնտին այս հրամանները
« բռնութիւն » կ'անուանէ, և իրեն
ու ընկերացը կողմէն կը բողոքէ : Ե-
րեսփոխանական ժողովոյն ներկայ
պարագայից մէջ փակուած կրնայ
թերեւս արդարանալ, բայց ոտտիկա-
նութեան նախարարին խօսքին ստու-
գութեան ինչպէս նաեւ երեսփոխա-
նաց ոմանց մայրաքաղաքս մնալուն
անպատեհութեանց վրայ չենք կըր-
նար կարծիք մը յայտնել : Հարկաւ
կառավարութիւնը կատարեալ տեղե-
կութիւններ տուելով գործելու մա-

սին աւելի ձեռնհաս դատաւոր է,
բայց գործադրութեան եղանակին
վրայ ցաւիլ պէտք է :

Ռուսիոյ Բուսնիոյ և Սերվիոյ
հետ կնքուած զինադադարի պայման-
ներն հետեւեալ կերպիւ ծանուցուած
են մայրաքաղաքիս անդղիական դե-
պանին առ խոր Տէրալի ուղղած հե-
ռագրոյն մէջ, որ փետր. 8ին իրի-
կունն Անդղիոյ երեսփոխանական ժո-
ղովին մէջ կարգադրուեցաւ :

Յօդ. 1. Թշնամութիւնը նորէն չեն
կրնար սկսիլ, բայց եթէ երեք օր ա-
ռաջ ծանուցուելով : Զինադադարին
կնքումը Ռուսիա պիտի հաղորդէ Գա-
րաապի :

Յօդ. 2. Զինադադարին ստորագ-
րուելէն ետեւ առնուած թնդանթի-
ներն ու երկիրներն ետ պիտի տըր-
ուին :

Յօդ. 3. Սահմանադ ծին և չեղոր
միջավայրին մանրամասն պարագանե-
րը կորոշէ, սրով դրեթէ բոլոր Պուլ-
դարիս, Բուսնի և Թրակիա՝ մինչև
Կ. Պոլսոյ և Կէլիպոլիսի դիմերը Ռու-
սիոյ ձեռքը կը յանձնուին :

Այս չեղոր հոգին վրայ բնաւ տմ-
բութիւն չպիտի կրնայ դրաւիլ, ոչ ալ
նոր ամբողջութիւնը չ'ընտելի :

Թուրքիոյ, Գարաապի և Սերվի-
ոյ միջև որոշուելիք սահմանադիմերն
հաստատուելու պաշտօնը խառն յանձ-
նաժողովոյ մը պիտի յանձնուի : Ռուսք
Սե. Ժովու վրայ Պուրկազն ու Միտի-
ան պիտի դրաւեն իրենց նպար բե-
րել տալու համար, բայց ոչ ազգա-
մըթերը :

Յօդ. 4. Սահմանադ ծին անդին
դէմ առ դէմ գտնուող գործութիւնը՝
զինադադարին ստորագրուելէն ետեւ
մինչև երեք օր ետ պիտի քաշուին :

Յօդ. 5. Թուրքերն իրաւունք պի-
տի ունենան 3 յօդուածին մէջ յի-
շուած ամբողջութիւնները պարագա-
ծաւանակներն անոնց մէջ գտնուած
զենքերն և այլն վերցնելու և նշանակ-
եալ տեղերը փոխադրելու՝ նշանակ-
եալ ճանապարհներ : Եթէ չկրնան վեր-
ցնել, անոնց հաշուեցուցակը պիտի
չինուի : Բերդերուն և ամբողջութեանց
պարագանքն հրամանատարաց ստա-
ցած հրամանէն ետքը մինչև 7 օր
պիտի աւարտի :

Յօդ. 6. Սուլթան մինչև 3 օր պի-
տի պարպուի Օսմ. դորքերէն և մար-
տանաւերէն, եթէ սառնոյցին պատ-
ճառաւ չ'արգելուին : Ռուսք Դանու-
բի նաւարկութեան արգելքները պի-
տի վերցնեն և նաւարկութեան հըս-
կեն :

Յօդ. 7. Երկրամիջիններն ինչ ինչ
պայմաններով պիտի բանին :

Յօդ. 8. Օսմանեան իշխանութիւնը
տեղ տեղ իրենց պաշտօնը պիտի շա-
րունակեն :

Յօդ. 9. Սև ծովու պաշարումը վերացած է :

Յօդ. 10. Վերստորեայ թուրք զօրականք Ռուսաց խնամացն յանձնըւած պիտի մնան :

Ձինադադարն յունվար 31ին ժամ 7ին գործադրութեան սկսաւ :

Իտալիոյ նոր գահակալ Ումպէրթօ թագաւորին հիւանդութեան վերայ հետեւալ տեղեկութիւնը կուտայ Գաղղիական Պիէն Բիւպլիք լրագիրն :

« Ումպէրթօ թագաւորը՝ գահակալութենէն առաջ քանի մ'անգամ արիւն փոխած էր : Գահակալութենէն ետեւ, իւր որդիական կսկիծը, պարագաներէն կրած սրտայուջութիւններն և պաշտօնական ընդունելութեանց պատճառաւ յաղնիին իւր հիւանդութիւնը ծանրացուցին փետրվար 10ին նորէն արիւն փոխեց, բայց և այնպէս իւր արքայական պարտականութիւնները կատարել և իրեն ներկայացող պատգամաւորութիւններն ընդունիլ ուզեց :

« Հետեւեալ օրը հիւանդութիւնը ծանրացաւ, բայց և այնպէս թորինօ երթալու պատրաստութիւնները շարունակեցան, սակայն ետ թողուլ հարկ եղաւ :

« Արդեօք անհրաժեշտ վտանգ մը կա՞յ : — Թագաւորին անձնական բժշակիչ Տոքթոր Սալոմէէ կը հաւատէ թէ ոչ : Սակայն սենեակէն դուրս չեմնելու հարկադրեալ է, և անկէց 'ի վեր ալ երկու անգամ արիւն փոխեց :

« Անցելոյն մէջ գահաժառանգար քայտրուոյն այս հիւանդութիւնը միշտ ծածուկ պահուած էր, բայց հիմա քաղաքական գործերը կրնան դադարման հանգիստի, որոյ պատճառը պէտք է գիտնայ ազգը : Օրինակի համար երեսփոխանական ժողովոյ բացումն ետ պիտի մնայ, իսկ անթուրեման հին մայրաքաղաքն երթալու առաջադրութեան գործադրութիւնը կամ յատարումն հիւանդութեան վիճակին ամենէն ապահով նշանը պիտի ըլլան : Եթէ կատարուի, հիւանդութեան անցաւոր ըլլալը պիտի հասկցուի : Իսկ եթէ չը կատարուի, հիւանդութեան ծանր ըլլալուն վրայ տարակոյս չմնար :

Հռոմէն եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Կարգինայոյ ժողո-

վը Պիոս Թի տեղ հռոմի Պապ ընտրեր է Բէքարի կարդինալը : Նորընտիր Պապն Հռոմի հին աղետական դերդատաններէն սերեալ՝ աղետարարոյ, խաղաղասէր, հմուտ և պատկառելի անձ մ'է կրտսի :

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտոն 21 փետր. Երեսփոխանաց ժողովին մէջ ելումը աից նախարար Սըր Սթաֆորտ Նորթհոթը լրտա թէ Ռուսիա և Անգլիա խօսք առնին իրարու որ Կէլիպօլիսի դերակղզին ինչպէս նաև Պուլայիւն և Կարդանելի ափական ծովեզրը չգրաւեն :

Լորտերուն ժողովին մէջ Լորտ Տէրպի ըսաւ թէ գետաշահարհողին դու մարման տեղը վերջնական կերպիւ Պատէն—Պատէն յորոշուած է, և աւելցուց թէ Աւստրիա կառաջարկէ որ յառաջիկայ մարտ ամսոյն առաջին շաբթուան մէջ գումարի :

Լոնտոն 21 փետր.		
Օսմ. Բօնա.	8 11/16	
Փոլս.	1865 8 1/8	
»	1869 8 3/8	
»	1871 31 1/2	
»	1872 15	
»	1873 8 1/4	
»	Եղիպտ.	48 5/8
Անգլ. Բօնա.	95 7/16	

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝ Գաղթականութեանց յանձնաժողովոյ նախագահ Ֆէյլի փաշան Կ. Պօլսոյ քաղաքապետութեան Միւսթաֆէյար անուանեցաւ :

Գերշէհիբի նախորդ կառավարիչ Արիֆ փաշան Եօղդաի կառավարիչ անուանեցաւ :

Երբեմն թղթատարութեան վերադառնալովեան Մուսաֆին Մուսթաֆա պէյ Գերշէհիբի կառավարիչ անուանեցաւ :

Մշոյ նախորդ կառավարիչ Շէֆիգ պէյ Սինոպի կառավարիչ անուանեցաւ :

Վսեմ. Սաֆվէթ փաշային վերադառնալու արտաքին գործոց նախարար անուանելին ընդհանուր գահութեան առիթ եղաւ : Տէրութեան ներկայ տաքնապայից օրերուն մէջ Ն. փաշան թիւնէն յարմարագոյն մէկը չէր կրնար արտաքին գործոց ամենա-

վախուկ պաշտօնին կոչուիլ, որ ամեն ժամանակեւ աւելի այժմ պէտք ունի Սաֆվէթ փաշայի խոհական և լրտամիտ հայրենասիրութեան և երկար ժամանակեայ փորձառութեան :

Մայրաքաղաքի Գաղղիական Նոբելի դեպան Պ. Ֆուրնիէ՝ հինգշաբթի օրը ելալով պալատն երթալով՝ գետաշահական վկայագրեր վեհ. Սուլթանին ներկայեց : Յետոյ Բ. Գուսնի երթալով առաջին այցելութիւնը տուաւ նախարարաց :

Թնդանթարանի վերադառնալովսմ. Նամըզ փաշային Բեդրասպուրկ ուղևորութիւնն ետ մնաց :

Կը հաւատեն թէ Անգլիոյ նաւատորմին՝ որ Իզմիտի ծովածոցը քաշուած էր, նորէն Մեծ կղզւոյն առջև եկեր է :

Հինգշաբթի օրն հաղարապետ Բեադիմ պէյ կարևոր գերբր բերաւ Ագրիանուպօլէս և առաջին նախարարին յանձնեց :

Պատիւէ լրագիրը քանի մ'օրէ 'ի վեր պտըտած զրոյցի մ'արձագանք ըլլալով կրնէ թէ Ռուսական զօրաց ընդհանուր հրամանատար Նիքօլա մեծ դուքսը Կ. Պօլսոյ պիտի գայ վեհ. Սուլթանին հետ տեսակցելու :

Երէկ իրիկուն լուր ելաւ մայրաքաղաքի մէջ թէ Հատէմ քէօյի Օսմանեան զօրաբանակը մինչև Այ—Սթեֆանօ ետ քաշուելով, Ռուսերն յառաջանալ սկսեր, և Սքօպէէֆի զօրաբանակէն 15,000 զօրք Քիւչիւք Չէքմէճէ գալով, 1500 ի չափ առական զօրք ալ Այ—Սթեֆանօ հասեր են :

Թուրք լրագրաց մէջ կը կարդանք թէ Գարդանիլ բերդին մէջ բանտարկեալ Սիւլէյման փաշային բանակի օգնականներն՝ որք Կ. Պօլսոյ կը գտնուէին, Սպարապետի դուռն հարցաքննութեան ենթարկուելով ծանր յայտնութիւններ ըրեր են :

Ճէրիտէի Աքքէրիէ լրագիրը սուտ կը հանէ Արաահանայ նախորդ հրամանատար Հիւսէյին Սապրի փաշային բերդաբեկութեան դատապար-

տուելուն լուրը՝ զոր ամենէն առաջ Պատիւէ առած էր : Կըսէ թէ պատերազմական տատանք եւս վճիռ տուած չէ, որովհետեւ հարցաքննութիւնը չէ տալարած :

Ճէրիտէի Հափտիս կը ծանուցանէ թէ Աւստրիոյ Գաղղիոյ և Իտալիոյ կառավարութիւնը իրենց մայրաքաղաքի գետաշահներէն ապահովել տեղեկութիւններ ստանալով իրենց ազգակցաց վիճակին վրայ, և տեսնելով ալ որ հաշտութեան բանակցութիւնը կանոնադրապէս կը շարունակին, առ այժմեա կեցեր են պատերազմական նաւեր յուղարկել 'ի Կ. Պօլսոյ :

Գահութեամբ կիմանանք թէ մայրաքաղաքէն շուտով իրենց հայրենիքը վերադառնալու հրաման ստացող Սամ. Երեսփոխանաց կարգին մէջ Հայէպի երեսփոխան Խարաճեան Մանուկ Էֆէնտիի անունը սխալմամբ հրատարակուած է լրագրաց մէջ, որովհետեւ որ և է կողմէ պաշտօնական ազգարարութիւն մ'եղած չէ իրեն :

Լէվնթ Հէրըլուի մէջ հետեւեալ կը կարդանք :

« Կիմանանք թէ զինեալ Չէքքէպայ կարալան մը Կ. Պօլսոյ գալու համար Ռուսաց գիծերէն անցած ժամանակ ձեռու ընին ունեցած վինչէսթէրի հրացանները Ռուսաց յանձնել չուզելով՝ Չաթալայի մօտերը ռուսական զօրագունդէ մը պաշարուեր և բաւական ստատիկ կուէ մ'ետեւ զինաթափ եղեր են : »

Ագրիանուպօլէս փետր. 6 / 18 թուով դուռն շամակի մը մէջ կը կարդանք թէ անցեալ շաբաթ օրը Ռուս գնդապետի մը գիւղը գրտնուեր է Զհօրի մը մէջէ, զոր Պուլղար ուղեկ մը ցոյց տուեր է Ռուսաց Յիշեալ գնդապետն ասկէց երեք շաբաթ առաջ անցալու եղած էր, և ինչ ծգած ըլլալը չէր խնայուած : Գիւղը գրտնուելու կուրքէն վերադառնալով էր : Պուլղար ուղեկին տուած տեղեկութեանց վրայ քաղաքին բնակիչներէն 5-6 մարդ բռնուելով բանտարկեցան : Սպանութեան շարժառիթը գործութիւն ըլլալ կը կարծուի, վասն զի բռնուած մարդոց միոյն վրայէն գնդապետին դրամաշահակը գտնուեր է :

ԶՈՒԱՐՃԱԿԱՆՔ

Կ Ս Մ Ի Թ

Գետաշահարհողըն ո՞ր պիտի գումարի :

Լորտերուն ժողովին մէջ Լորտ Տէրպի ըսեր է թէ՝ այս խնդիրը քայլ մ'առաջ գնացած չէ :

— Թուրքիոյ պէս, կըսեն հիմա մեր թըշնամիները :

Բայց, ինչո՞ւ այս խնդիրը քայլ մ'առաջ գնացած չէ մինչև այսօր. կամ եթէ առաջ գնացած չէ՝ դո՞նէ քայլ մ'ե՞տ ալ գնացած չէ : ուր որ էր՝ հոն կեցած է :

Խնդիրը ի՞նչ յանցանք ունի. անգաւ մալուծեցին խեղճը : Ի՞նչպէս կրնայ շարժել :

Ըստ մեզ՝ խնդիրը ուր որ է՝ գետաշահարհողը հոն գումարելու է :

— Ոչ, Ռուսիան կառաջարկէ եղեր դու մարել այնպիսի երկրի մը մէջ որ Արևելեան խնդիրէն բնաւ չաճ չունենայ :

— Եւ չէ՞ն կրցած մինչև հիմայ անանկ երկրի մը գտնել :

— Ոչ :

— Հայաստանի մէջ գումարեն թո՞ղ, որ սու այժմ բնաւ չաճ մը չունենալէն դատ բաւական վնաս ալ տեսաւ :

—

Նարախն սըրտրանաց չարաթ է :

Արտահանայ հրամանատար Հիւսէյին Սապրի փաշան մշտնջենաւոր բերդաբեկութեան դատապարտուեր է :

Որչա՞մ աղէկ կըլլար՝ եթէ սա մարդը Արտահանայ հրամանատար չըրած բերդաբեկութեան զրկուեր . . . իր երեսնայ այսչափ վնաս չէինք տեսներ :

Անդամ մը խաբուեցանք և վնասուեցանք. երկրորդ անգամ չ'վնասուելու համար հիւանդութենէն խոհեմութիւն ձեռք առնելով ապարելու ենք բանտապահներուն՝ որ աղէկ հսկողութիւն ընեն փրան, որպէս զի մի՞ գուցէ Արտահանայ պէս այս բերդն ալ պարպելով մեկնի . . . :

Բերդերու մէջ պահվելու ո՞րչափ մարդ իկ բերդեր պաշտպանելու զրկեցինք . . .

Անգլիական նաւատորմիկն կղզին երուն առջևէն ելնելուն ու Իզմիտի ծովածոցը երթալուն պատճառը իմացա՞ք :

— Անցեալ օր դրած էինք ա՛, Ռուսիոյ բանակը քիչ մը ետ քաշել տալու համար չհեռացա՞ւ :

— Առջի օրը անանկ էր, բայց այսօր ա՛նանկ չէ : Իզմիտի ծովածոցը կղզիներէն աւելի յարմարութիւն ունի եղեր նաւատորմիկ պահելու . . . :

Ո՞վ Անգլիա, հպտաակներդ պաշտպանելու համար ձարաց հանեցիր նաւատորմիկը թէ նաւատորմիկի յարմար տեղ մը փնտռելու համար :

Եթէ այս վերջինին համար է, Անգլիոյ հպտաակներն այսօրու ընէ Իզմիտ երթալու են, որովհետեւ հոն աւելի յարմարութիւն ունին պաշտպանուելու : Ա՛լ նաւատորմիկն իրենց ետեւէն չպիտի գայ, այլ իրենք նաւատորմիկին ետեւէն պիտի երթան :

« Նախ և առաջ պէտք է գիտնալ թէ Գարդանիլն որու ձեռք պիտի մնայ : »

Այսպէս կը խօսի Պիտաբը իլլանը. այսինքն՝ որու ձեռքը Գարդանիլի վրայ պիտի մնայ :

Այս խնդիրն ալ նոր երևան ելաւ :

Մենք ներկայ պատերազմին ըրիտանդէնից վիճակին բարեկարգութեանը համար կարծելով — ինչպէս որ դարձեալ այնպէս կը կարծենք, և Գարդանիլն ալ ըրիտանդէնաց ըլլալը մեր մարշն անցած ըլլալով՝ տանիկ հարցումի մը բնաւ չէինք սպասեր, և այնպէս համոզուած էինք թէ՛ անոր ձեռքը պիտի մնայ՝ որու ձեռք որ մնացած էր մինչև այսօր :

Մեր կարծիքը ծուռ և մեր համոզումը պիտի է եղեր : Պիտաբը իլլանին խօսքէն սա կը հասկըցուի որ Գարդանիլն ալ այս օրերս կնքուեր ու քրիստոնեայ է եղեր . . . :

Չրոյց կը պտըտի թէ մեր նաւատորմիկըն ալ կը համոզեն եղեր որ քրիստոնեայ ըլլայ :

Թէպէտ և առ զրոյցն անհաւատալի է, բայց այնպիսի դարու մը մէջ, ուր ամեն մարդ կրօնի ազատութիւն կը վայելէ, անյուսալի բան մ'ալ չէ :

— Մա՛րդ Աստուծոյ, բերանդ բաց ու երկու խօսք ալ ինձի հետ ըրէ՛ :

— Քեզի հետ ի՞նչ խօսիմ, կնի՛կ :

— Ի՞նչ պիտի խօսիս, Թագուկ տուտու յին Երկը ամեն օր իր կնիկանը նոր լուրեր կը բերէ, կը նստի հետը կը խօսի բոլիւթիքայի վրայ. դուք բան մը չես ըսեր : Հազարու մէկ խօսքեր կը պտըտին կոր . . . Մօսկօֆը եկեր է եղեր, նորէն գացեր է եղեր, Ինիլիլիլ տօնանման ատաներուն առջևն է եղեր . . .

— Էքմէճէին այսօր ալ հաց չըրաւ :

— Վերջէն Իզմիտ գացեր է եղեր . . .

— Էքմէճէին . . .

— Չէ ձանձմ, տօնանման, հիմայ ալ Պուրասիի ջուրերը պիտի երթայ եղեր :

— Միտն ալ քսան երկուքի ելեր է . . .

— Մօսկօֆն ալ նորէն պիտի մանայ եւ եղեր . . .

— Ինչո՞ւ պէտք քուկին, կնի՛կ, դուք տանդ գործերը նայէ՛ :

— Ինչո՞ւ չպիտի խառնուիմ եղեր . . .

Ինիլիլիլ մեզի խօսեր է եղեր . . . կը . . .

— Եթէ կնիկները խաղող կըլլան, տես . . .

— Գարձեալ անանկ է ես . . .

— Ձանձմ, ի՞նչ կուզեն կոր ասոնք :

[illegible]